ցին։ Թալանուած է բոլոր գիւղը, եկեղեցին, սպանուած ցաքատով և ապա գնդակով 90 տարեկան քահանան։ Խոզնավարում սպանուած են 10 հայ, թալանուած է գիւղի կէսը, այրուած են 10 տուն (բոլոր գիւղը 80 տուն հայ է, 20 տուն Թուրք), այրուած են Թուրքերի բոլոր տները, սպանուած և վիրաւորուած են շրջակայ Թուրքերից 100-ից աւելի։ Զէյվա 25 տուն է, սպանուած 3 հայ, տները աւերուած, իրերը հարևան Թուրքերի մօտ պահ են տրուած։ Զէյվու 100 տունը Թուրք է (այս Մղաւուղի Զէյվան է)։ Ալիղուլի 100 տնից աւելի է, սպանուած 10 հայ, այրուած 20 տուն. Թալանուած գիւղի կէսը. Թուրքերից սպանուած վիրաւոր 100-ից աւելի, մեծ մասամբ կազակներից։

Հարար 135 տուն է, Թալանուած հարևան գիւղերից։ Հրամայուեց խիստ կերպով՝ ա) առանց դատի՝ իրերը և անասունները յետ առնել. բ) էկզեկուցիա նշանակել մասնակցող բոլոր Թուրք գիւղերում. գ) զինուորական դատի ենթարկել մեղաւորներին. դ) բռնել գլխաւորներին, բանտարկել մինչև քննութիւնը (արդէն բռնուած են մօտ 60 հոգի). ե) հայ գիւղերից բերել Թուրքերի գիւղը, որ հայկական գծին միանայ և նրանց տեղը Թուրքեր բնակեցնել. զ) Մինքեանդի Թուրքերին դուրս անել գիւղից և ցրել։ Սեպտեմբերի 18-ն է, և առայժմ հանգիստ է. անհատական սպանութիւններ լինում են։

Տեսնենք խիստ հրամայուածները ինչքան արագ կը կատարուին։ Ղափանում առ այժմ հանգիստ է։ Պրինց Նապոլէօնը այցելեց վնասուած Մինքեանդ, Խոզնավար, Ալիղուլի գիւղերը, եղաւ Նոյնպէս և Տաթևու վանքում։ Հարարեցիք օգոստոսի 26-ից մինչև այսօր Թուրքերի մօտ են, ձեռք են առնուած միջոցներ յետ բնակեցնելու, մինչև գիւղերի համախմբումը ըստ աղուԹեան։

Ներսէս վարդապետ.

Տաթև, Սեպտ. 18.

III

Նախճաւանի եւ Շարուր—Դարալագեազի սիանգամայն աւերուած և կողոպտուած գիւղերի Թիւն է 26։ Այդ գիւղերն են. 1) Թազաքեանդ 40 տուն, 2) Հաջիվար 57 տ. 3) Իւխարի ուզուն-օբա 73 տ., 4) Դիտավար 43 տ. 5) Նաղարաբաղ 84 տ. 6) Զահրի 200 տ., 7) Մամարղա Դիզա 48 տ., 8) Խալիազ 83 տ., 9) Ալագեոզ-Մաղրա 68 տ., 10) Նորս 136 տ., 11) Ղարաբաբա 34 տ., 12) Արինջ 59 տ., 13) Գժաձոր 83 տ., 14) Նորս-Մաղրա 53 տ.,

15) Գեաղջարաջուր 55 տ., 16) Նորաշէն 164 տ., 17) Սուլթանբէկ 89 տ., 18) Սես 51 տ., 19) Ալահի 46 տ., 20) Վարժազեար 170 տ., 21) Ալահլու 120 տ., 22) Քէշտաղ 71 տ., 23) Դաշարխ 32 տ., 24) Թաղագիւղ 33 տ., 25) Ուլիանորաշէն 220 տ., 26) Ելփի 88 տուն։ Ընդամենը 2200 տուն։ Տեղական հանդամանքներին քաջ ծանօթ պ. Ա.-Դ-ն հաշուում է որ այդ թըշուառացած ընտանիքներին իսկոյն օգնելու համար անհրաժեշտ է 650,000 բուբլի։ Երևանի գեներալ-նահանգապետ արքայազն Նապոլէոն, գիւղատնտես Սահակեանի զեկուցման վրայ հիմնուելով, խոստացել է գանձարանից բաց թողնել 34,000 ր., ի հաշիւ Նախճաւանի և Շարուրի թուրք ժողովուրդի շտեմարանական դրամագլխի։

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ *)

—

Ուսումնարանական Խորհուրդների քաղաքականութիւնը զգալապէս տարբերւում է քաղաքային ինքնավարութեան քաղաքականութիւնից (պոլիտիկայից)։ Լիբերալիզմը և կոնսերվատիզմը նեղ իմաստով բոլորովին այն աստիճան չեն հանդէս գալիս ուսումնարանական Խորհուրդ ընտրելիս, ինչպէս քաղաքային խորհրդի ընտրութիւնների ժամանակ։ Թեկնածուներից ոմանց ընտրում են ի նկատի ունենալով նրանց բուռն համակրանքը դէպի ուսումնարանական օրէնքները և ձգտումը՝ տալ ուսումնարաններին ըստ կարելոյն աւելի աղատ և լայն բացատրութիւններ։ Ոմանց ընտրում են ինչպէս «յետադէմների» (ըէակցիոներ), ի նկատի ունենալով դրանց հակումը՝ տալ որքան կարելի է օրէնքներին նեղ մեկնութիւն։ Իսկ առաւելապէս թեկնածուները ընտրւում են իբրև այս կամ այն դաւանութեան ներկայացուցիչներ կամ ընդհակառակը—ընտրւում են որովհետև չեն պատկանում և ոչ մի կրօնական համայնքի։ Այդպիսով

*) Տես «Մուրճ» № 9.